Պարույր Սևակ

Հերոսները

Թե չլիներ՝ ինչ որ եղավ,
Ի՞նչ իմանաս, հիմա գուցե
Զրանցքներ էր Զոյան բացել,
Գորովագին մայր էր դարձել
Եվ ապրում էր հաշտ ու խաղաղ,
Թե չլիներ՝ ինչ որ եղավ:
Թե չլիներ՝ ինչ որ եղավ,
Թե մեր կյանքը մնար խաղաղ,
Անշուշտ նրանք՝ կրասնոդոնցիք,
Դարձել ուսման գերազանցիկ,
Դարձել էին կամ շինարար,
Արտիստուհի կամ նորարար,
Կերտել էին և կառուցել,
Խորունկ երգեր բանաստեղծել -
Հայտնի դարձել կյանքում խաղաղ,-
Թե չլիներ՝ ինչ որ եղավ:
...Հիմա գուցե մեր աշխարհում
Արհավիրքից հավետ հեռու,
Մի նոր Զոյա, անհայտ դեռ մեզ,
Դեռ դեռատի, համեստ ու հեզ,
Դասագրքերն է իր թերթում:

Ի՞նչ իմանաս, գուցե հիմա
Մեկ այլ աղջիկ՝ մի Չայկինա,
Իր պատմության դասն է թերթում:
Ատելության հուրը սրտում,
Աչքերի մեջ մոլուցք ու մեզ՝
Գուցե հիմա մի նոր Օլեգ
Ֆադեևի գիրքն է կարդում...
Հազար Հունան ու Մատրոսով
Աշխատում են, գործում այսօր,
Քար են տաշում ու հունձ անում,
Խաղող ճմլում տաք հնձանում,
Հնոցների դեմ կատաղի
Ձև են տալիս շեկ մետաղին,
Սովորում են, գործում անդուլ,
Կարոտում են, սիրում, խանդում...
Եվ մեզանից, հավանաբար,
Շատ շատերը նրանց գիտեն.
Մեկըս մեկի թևն է մտել,
Ջրուցել է մտերմաբար,
Վստահել է, սիրտը բացել:
Եվ մեր մտքով չի էլ անցել,
Թե աղջիկը այս դեռատի
Չայկինա է սրտի խորքում,
Թե կրծքի տակ այս խառատի
Կոշեվոյի սիրտն է զարկում,
Թե կոլխոզնիկ այս պարզ տղան,
Որ անցնում է ծով դաշտերով,
Մի Հունան է, մի Գաստելլո...
Մենք չենք հիշում: Հարկ էլ չկա:
Բայց - երեկվա փառքը վկա -

Մեր թշնամին թե մոռանա,
Իրեն վրա թող չարանա...

03.IV.1951թ.
Երևան